

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հոկտ. 8 Մճ.  
Վեցամսեայ Կ. Պոլսոյ 4 Մճ.  
Չամուցման տողը մէկ անգամի հա-  
մար 3 զուրուշ երկու անգամի հա-  
մար 2 զուրուշ աւելի անգամներու  
համար զատ սակարկութիւն կըլ-  
այ :



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Շումուռլէն առնուած հեռագիր  
մը կը ծանուցանէ թէ անցեալ երեք-  
շաբթի 13/23 սեպտ. Օսման փաշա  
փառաւոր յաղթութիւն մ'ալ ըրեր  
է Ռուսաց վրայ , որք արեւելեան կող-  
մէն Բլէշլայի դէմ մեծ զորութեամբ  
սաստկապէս յարձակած էին : Օսման  
եան զօրքն և թնդանօթներն ահա-  
գին դիմադրութիւն մ'ըրին , և Ռուսք  
ուր չհաղար հոգի և չորս թնդա-  
նօթ կորուսանելով եւս միւլեցան :  
Օսմանեան զօրաց կորուստը տակա-  
ւին յայտնի չէ : Այս պատերազմին  
պաշտօնական հեռագրաւորը մինչև  
մեր գրած միջոցին հրատարակուած  
չէր . կը կարծուի որ թերեւս աւրուած  
ըլլալով ուշացած է : Մէհմետ Ալի  
փաշայէն ալ պատերազմի լուր կ'ըս-  
պատուէր :

Անգղիական թայմը լրագիրն Օս-  
մանեան զօրավարներուն ընթացքը  
քննադատելով Սիւլէյման փաշային  
Շիբկայի վրայ ըրած յարձակումներն  
անտեղի կը համարի . քանզի հոն , կը-  
սէ , փոխանակ տասնութ տասներկու հա-  
զար քաջ զինուոր կորուսանելու , ե-  
թէ կը ճնն մէկ մասը պահելու չափ զօ-  
րութիւն թողուր և ինք Օսման փա-  
շայի օգնելու համար Բլէշլայի կողմն  
երթար , Լոֆճա դանուող Օսմանեան  
զօրաց հետ միանալով չէր թողուր որ  
Ռուսք այն քաղաքն առնուն . յետոյ  
Օսման փաշային հետ 'ի միասին կըր-  
նար նաև Ջիլձովի կամուրջին սպառ-  
նալ թայմը Մէհմետ Ալի փաշային  
ընթացքն և շարժումներն յամրաքայլ  
կը գտնէ , քանզի թողուց , կըսէ , որ  
Ռուսները Լոսի գիծէն հանդարտու-  
թեամբ եանթրայի գիծը քաշուին :  
“ Իսկ Օսման փաշային Բլէշլայի պաշտ-  
պանութիւնը , կըսէ , այս զօրավարին  
անունը խիստ բարձրացուց զինուո-  
րական համբաւոյ արձանագրութեանց  
մէջ : Իւր գիւրքն ընտրելու խնամու-  
թիւնն , անպաշտպան քաղաք մը քիչ  
ժամանակի մէջ ահեղ ամրոցի մը  
փոխելու համար 'ի գործ գրած ջան-  
քնն ու կորուր , Ռուսաց ւարձակու-  
թեան և յուսահատ յարձակմանց  
առջև ըրած քաջ և պաշարիւն դի-  
մադրութիւնը , պաշտպանողական դի-  
քը թողլով յարձակողականի սխալու-  
վայրկեանը ճշգրտութեամբ որոշին 'ի  
րեն արտաքոյ կարգի յաջողակու-  
թիւնն ունեցող զօրավար մ'ըլլալը կը  
ցուցնեն : Այսու ամենայնիւ Ռուսաց  
Բլէշլայի վրայ ըրած յարձակումնե-  
րուն ընդունայն երեւոյն պատճառաւ  
սխալ է կարծել թէ Ռուսք նոյն իսկ  
այս տարուան պատերազմին ժամա-  
նակ յարձակողական ընթացքը պիտի  
թողուն : ”

Օրուան ամենէն կարեւոր լուրն է՝  
Օսմանեան զօրաց Սիւլէյմանէն Ռու-  
մանիոյ հողն անցնիլն , որուն պաշտօ-  
նական հեռագիրն ալ մինչև մեր գր-  
ած վայրկեանը հրատարակուած չէր ,  
բայց հաստատապէս կը կարծուի որ  
ստոյգ է : Արդէն քանի մ'օր յառաջ  
Եւրոպական թերթերը կըսէին թէ  
Սիւլէյմանի առջև կամուրջ մը գրուել  
սկսուած է . և քանզի այն կողմն Ռու-  
մանիական զօրք քիչ կայ , որոց մեծ  
մասը Բլէշլայի առջև և Նիկոպոլիս  
են , հաւանական կը թուի որ Օսման  
եան զօրքը Ռումանիոյ երկաթուղի  
ներք քանդեն , և մինչև Պուրէշ եր-  
թան , Սիւլէյմանի դէմ քայլարաշէն  
մինչև Պուրէշ քառասուն միոն հեռա-  
ւորութիւն միայն ըլլալով :

Ասիոյ կողման պատերազմական  
գործողութեանց գալուի ինչպէս յայտ-  
նի է , Սոփում քանի մը շաբթիէ 'ի  
վեր Օսմանեան զօրաց կողմէն բոլր-  
ովին պարպուեցաւ , և Կորչաքով  
իշխանն անցեալները Ռուսիոյ դեմ  
պաններուն ուղղած հեռագրով մը  
կը ծանուցանէր թէ Ալեքսանդր զօրա-  
վարն (որ ըստ Տէյլի Նիւզի մէկ թղ-  
թակցին Ռուսիոյ Հայ զօրավարներէն  
մին է եղեր) , Ապագէլներուն ապըս-  
տամբութիւնը բոլորովին զսպեր է և  
Ռուսաց զօրքը նորէն Սոփումը դա-  
ւեր են : Պաթմա կողմը Տէրվիշ փա-  
շայէն նոր լուր մը չկայ այս օրերս .  
իսկ Մուսթաֆա փաշա Կէտիկէրի մեծ  
յաղթութեանէն 'ի վեր կարեւոր շաբ-  
թում մ'ըրած չէ : Միայն խմայիլ Հադ-  
գի փաշա , որ Պայաղիտի կողմէն  
Ռուսիոյ հողը մտած էր , քանի մ'օրէ  
'ի վեր աւելի յառաջ խաղալու վրայ  
է , մանր մունր պատերազմաց մէջ  
Ռուսներուն բաւական կորուստ տա-  
լով և զանոնք յետոյ հանձնելու պար-  
տաւորելով : Մուսթաֆա փաշայի հրա-  
մանաւ սարսափելի եղեւնադարձ ճէ-  
լալետալին խմայիլ Հադգի փաշային  
բանակէն վառուարէր է , և անկէ 'ի  
վեր բնակիչը ապահովութիւն գտնե-  
լով իրենց տունները կը վերադառնան  
եղեր : Ճէլալետալին մէկ ուրիշ ժը-  
պըրհուութիւնն ալ կը պատմէ Լէվիթ  
Հերըրի թղթակցից : Միւնիսթրա իւր  
արքաներաներով վանէն կանցնէր պա-  
տերազմի ասպարէզն երթալու հա-  
մար , Գիւրտին մէկը Հայ մ'սպաննած  
էր : Մարդասպանը դատուելով մահ-  
ուան կը դատապարտուի , և ըստ սո-  
վորութեան վերջին անգամ մ'ալ դա-  
տարանին առջև կը հանուի , ուր ներ-  
կայ է եղեր Ապագէլեան Մարիոս է-  
ֆէնիսին՝ որ այն ատեն վալիի Մուս-  
ալին էր . բայց այն միջոցին ճէլալետ-  
ալին զինեալ մարդերով ներս կը խու-  
ժէ և “մարդասպան Գիւրտի մը պա-  
տիժը ստատիկ ապրտակ մ'է” ըսելով ,  
մարդասպանը կ'ապրտակէ և ազատե-  
լով կը տանի : Բայց այս աւագակնե-  
րուն այսպիսի գործերն անթիւ են ,

և Եւրոպական լրագրաց թղթակցի-  
ներուն ջէրքէդաց և Գիւրտերու վը-  
րայ գործները մինչև հիմայ կրնան  
հատորներ լեցնել : Բարեբաղդաբար  
Մուսթաֆա փաշայի խստութիւնն ա-  
ւելի մեծ եղեւնաց առաջն առաւ .  
բայց շատերուն համար ձեռք առ-  
նուած միջոցներն անբաւական են ,  
և ասոր պատճառ կը ցուցուի պատե-  
րադմական վիճակն , որ այդ վայրագ-  
վրանարեակայ դէմ պէտք եղած խըս-  
տութեան միջոցները հներեր գործադ-  
րել սակայն խաղաղութիւնն և երկրին  
այսպիսի փառաւոր բնակչաց անդորրու-  
թիւնն ապահովելու համար խիստ և  
արագ միջոցներու անհրաժեշտ պէտ-  
քն անուրանալի է :

Սերվիլի շաբթման վրայ տակաւին  
ստոյգ լուր չկայ , բայց լրագրաց ու-  
մանց Պիլկրատի թղթակցները կը  
ծանուցանեն թէ Բլէշլայի դէմ Ռու-  
սաց յարձակումներն յաջողին կամ ոչ ,  
Սերվիլի անպատճառ ղէնք պիտի առ-  
նու . արդէն պատրաստութեամբ ըդ-  
բաղեալ է Կորչաքով իշխանին կող-  
մէ մասնաւոր պաշտօնով Պէրկրատ  
զրկուած ջէրթիլէֆ իշխանին ձեռք  
պայմանագրութիւն մը կնքուած է  
Սերվիլի հետ , որոյ պատերազմական  
ծախքը Ռուսիոյ պիտի վճարէ : Կըսուի  
նաև թէ Կ. Պոլսոյ Սերվիլիական գոր-  
ծակատար Պ. Գրիպիլ չհաճանք ըն-  
դունել է որ մեկնելու պատրաստ  
գտնուի : Գերմանական թերթերը կը  
ժխտեն Պէրկրատի կառավարութեան  
Ռումանիոյ և Սերվիլի վրայ ազդեցու-  
թիւնն բանեցուցած ըլլալը Ռուսիոյ  
հետ դաշնակցելու համար , բայց այս  
ակնբեր է որ եթէ Կորչաքով իշխանը  
Պէրկրատէն քաջալերութիւն ու ապա-  
հովութիւն չառնուր , չէր համարձա-  
կել թուրքիոյ դէմ լծնամական յայ-  
տարարութիւններ հրատարակելով պա-  
տերազմի ձեռնարկել : Պէրկրատի  
Անգղիական և Գերմանական հիւպա-  
տաներն իրարու հակառակ ճիւղ կը  
թափեն , առաջինը ջանալով որպէս  
զի պատերազմը չհրապարակէ և Բ. Գը-  
րան հետ կնքած հաշտութիւնը չխզէ ,  
որոյ համար գլխաւորապէս Անգղիա ալ  
միջնորդած էր , իսկ երկրորդը Միւրան  
իշխանը պատերազմի կը յորդորէ և  
զերս Գերմանիոյ կողմէն Ռուսիոյ ցուց-  
ւած համակրութեան նշանները մի-  
այն ասոնք չեն , Վիլհելմ կայսրը Ռու-  
սական գունդի մը (որ իւր անունը  
կը կրէ) հեռագիր մ'ուղղեց , ուր զայն  
ողջունելով կը բարեմաղթէ որ դուն  
զին գրօջը միշտ յաղթութիւններ գտի  
նինքնով փառաւորի : Այսպէս Գրի-  
անուան օրն Աւստրիոյ կայսրն Ռու-  
սիոյ համակիր ցոյցեր ընէին ալ Գեր-  
մանիոյ ազդեցութեան կը արուի :  
Կարծես թէ Ռուսիա օրչափ յաղթը-  
ւի , այնչափ Գերմանիոյ համակրու-  
թիւնը կաւեցիկ անոր վրայ . քանզի

օրչափ որ Գերմանիոյ շահերուն ան-  
նշապատ կրնար ըլլալ Ռուսիոյ դի-  
ւին և մեծամեծ յաղթութիւններն ,  
այնչափ ալ աննշապատ է անոր պար-  
տութիւնն ու տկարութիւնը . ուստի  
Գերմանիա պաշտպանի կերպարանք  
կառնու գրեթէ Ռուսիոյ նկատմամբ  
նոյնը կրնայ ըսուիլ նաև Եւրոպիոյ  
համար , և այս պատճառաւ է որ Եւ-  
րոպա ալ թէ և Ռուսիոյ յաղթութիւն  
ներն ու երկրակալութիւնը չէր ու-  
ղեր , բայց անոր կորակոր պարտու-  
թիւնն ալ իւր շահերուն նպատատար  
չհամարիր : Ահա այս նկատմամբ է որ  
Տէպա լրագիրը կըսէ . “ Գուցէ պատ-  
ճառանք գտնուի ( թուրքիոյ դէմ )  
գառն գանդաւորներ և սպանալից  
շարժումներ ընելու : Կարծենք ներ-  
կայ վիճակն այս է , որ դժբաղդ-  
թուրքերուն բողբոլին նպատատար  
չէ : Մարդ կը հարցնէ երբեմն ինքնի-  
րեն թէ ինչ բանի կը ծառայեն թուր-  
քերուն այսպիսի լու պատերազմին ու  
յաղթին : Ասոր համար ապագայ  
դեպքանախորհուրդներու մէջ լաւա-  
գոյն պայմաններ պիտի կրնան ըն-  
դունիլ : ” Այսու ամենայնիւ Տէպա  
կը յարէ թէ “ Գ. Գրան յաղթութեամբ  
ընկելը զինուորներն իրեն աւելի օգ-  
տակար պիտի ըլլան քան թէ պատե-  
րազմն առաջ , երբ Ռուսիա այսպէս  
տկարացած և իւր համարուն ու ազ-  
դեցութիւնը կորուսած չէր : ”

Բեդրասպուրկի Նուրի Թան լրագի-  
րը վերջին օրերս Գերմանիոյ վիլհելմ  
կայսրը ըրած մէկ խօսքը հրատարա-  
կած է զոր յիշեալ առաստիկան թեր-  
թին Պէրկրատի թղթակցից փաթեցեր  
է հեռագրաւ հաղորդել իրեն , և ու-  
րոյ ստուգութիւնը Պէրկրատի քաղա-  
քական ակումբներուն մէջ տարակոյսի  
տակ ձգուած չէ : Վիլհելմ կայսրը  
պատերազմը վերջացնելու համար չէ-  
զոր տէրութեանց բարեկամական միջ-  
նորդութեանը վրայ պարտած զրոյց-  
ներուն տալիս ըսեր է . “ Գիւրտը  
գիւր Սլէքսանդր կայսրը խաղաղու-  
թիւնն առնէ և չնայ ընել մինչև որ  
չհասնի այն նպատակին՝ որոյ համար  
զէնք առած է : ”

Պաթմա մէկ սեպտ. 19 թուով հե-  
տեալը կը գրեն .

“ Երկու բանակաց մէջ ալ կատար-  
եալ անդործութիւն կը տիրէ : Այս-  
պիսի Ռուսք իրենց ջամէլիայի բա-  
նակին շուրջն դրեալներ կը շինեն ,  
փութեմանէն մէկ ժամ հեռու : ”

Ռուսական բանակն այս օրերս  
մեծապէս զօրացած : Վլադիմիր-  
սէն եկած օգնութիւններէն զատ ,  
ուրիշ զօրաբաժին մ'ալ Օլադիկայէն  
ճանաչելու Օլադիկէրթի առաստիկան  
բանակն երթալու համար : Կը կար-  
ծուի որ Ռուսք նորէն յարձակողա-  
կանի ձեռնարկելու միտք ունին : ”

Ուստի Տէրվիչ փաշա ալ ամեն պատ-  
րաստութիւն կը տեսնէ՝ թշնամոյն  
պատահական յարձակմանց հզօրե-  
ղապէս պատասխանելու համար :  
Ռուսական զօրաց տաղանդէն վի-  
ճակը շատ քիչ է՝ բռնած վատա-  
ւորը գիրքերուն պատճառաւ : Բազ-  
մաթիւ հիւանդք կան, մանաւանդ  
նոր եկող զօրաց մէջ . որք չեն կր-  
նար կովկասի կլիմային վարժիլ :

Տէրվիչ փաշան իւր զօրաց ձմե-  
րային կայանները լաւ վիճակի մէջ  
գտնուող համար ամեն միջոց տնօրի-  
նեց : »

Պաթլումի ժողովրդաց և բանա-  
կին տաղանդութիւնը շատ գոհացու-  
ցիչ է :

Ասիոյ Օսմանեան բանակին հըրա-  
մատարութեան քով գտնուող Գաղ-  
զիայի թվովակից մը հետեւեալ կարե-  
ւոր տեղեկութիւնները կուտայ Մուս-  
թափաշ փաշայի զօրաց, և մասնաւորա-  
պէս Քիւրտեշուս վրայ :

Մուսթափա փաշայի բանակը կը տա-  
րածի Կարս-Չայի հովտին աստիճանաձե-  
լունքներէն մինչեւ Արիւս-Չայի կրթնող և  
Անիի վրայ նստող սարահարթի մը վրայի  
ամուր դիրքը : Կը հաւատեն թէ յիշեալ  
բանակն 30,000 զորակէ կը բաղկանայ,  
որոցմէ վար սէպը է երթող քիւրտերուն  
ամրոն և ուրիշ անկանոն զօրքերն, որք  
աւելի նեղութիւն կը պատճառեն քան թէ  
օգուտ : Բայց հետեւի զօրքը, կանոնա-  
ւոր, բէտիկ և մուսթաֆիզը, արհամար-  
հելու չգործ . վասն զի ամեն ալ էապէս  
զինուոր են . զէնքը կը սիրեն և սաստիկ  
զրդուեալ են այս համալսման թէ իրենց  
կրօնը վտանգի մէջ է : Ասոնց համար  
Մուսթափա գերագոյն էակ մ'է, որ իրենց  
կենաց վրայ իրաւունք ունի, և իրենք ալ  
պատրաստ են զայն դռնելու ի պաշտպա-  
նութիւն իսլամութեան : Յիշեալստեալ տա-  
նապանք, կերպար, հագուստի և զը-  
րամոյ պահուսթիւն աշուրնուն չերեւար :  
Եթէ օր մը ուտելիքին պակսի կամ ան-  
բաւական ըլլայ, Աստուած այսպէս կա-  
մեցեր է կրօն, և իրիկունը դարձեալ  
ճերմակեցողութեամբ կաղթեն հաւատա-  
ցիկը իշխանին համար : Այս զօրաց մէջ  
մասնաւորապէս նշանակութեան արժանի  
են արար վաշտերն, որք բանակին ամե-  
նէն հաստատուն, ամենէն պատերազմա-  
օէր և ամենէն խիզախ զօրքն են, և ու-  
րոց վրայ միշտ գոյնաւ կը խառնուի : Եւ  
արդարեւ ասոնք այն պատերազմող զին-  
ներուն են, որ իսլամութիւնը հին աշ-  
խարհին ամեն կողմ տարածեց՝ Հնդկաց  
ծովէն մինչեւ Արեւելոյ ստուերները :  
Արեւելոյն Արքիպելագոսի կղզիներէն  
մինչեւ Ատլանտեան Ովկիանոս  
սի եղբը :

Այս Արար և Սուրեպի զօրաց շնոր-  
հիւ Մուսթափա փաշան վերջապէս պատ-  
կանելի հեծելազօր մը պիտի ունենայ,  
որ կարեն ծառայութիւններն պիտի մա-  
տուցանեն : Այս հեծելազինէն շատերն,  
որոց թիւն արդէն 30000 կանցնի, Հա-  
լէպէն, Ուրֆայէն, Համաշէն և Գամա-  
կաշէն երկու կամաւորներ են : Իրենց ձի-  
երն սքանչելի են : Ամեն ալ արարացի  
ձիոր ամենէն ազնիւ ցեղէն են : Իրենց  
սպասանելիութիւնն ալ շատ վաղելու է,  
իւրաքանչիւր թուր մը և Հէնրի-Մար-  
թիին հրացան մ'ունի : Ասոնցմէ զատ ու-  
մանը եղեգնեայ երկայն նիզակ մ'ունին,  
զոր մեծ ճարտարութեամբ կը գործածեն :

Այս արարներուն վրայ մեծ փառահա-  
թիւն կայ հեռադիտութեանց գործածե-  
լու համար : Իրաւունք կայ յոսուել թէ  
այս պաշտօնը Քիւրդերէն աւելի լաւ պի-  
տի կատարեն, քանցմէ (Քիւրդերէն) զին-  
ւորական իշխանութիւնը գաւառապէս կը  
գտնուաւ միշտ, և որք բնաւ օգուտ չու-  
նին : Ասիկցի զատ չփառահաւոր անոնց  
վրայ, վասն զի Օսմանեան զօրաց յաղ-  
թող եղնիկուն վրայ էր որ եկան մահիկին  
կողմն անցան : Եթէ Ռուսը յաղթող ելնէ-  
լին, Քիւրդերն անոնց ետեւ պիտի երթային  
շարունակ յուսով որ կրնային ուղած  
նուն պէս աւարտութիւն ու տերութիւն  
գործել : Տարալոյս չեայ, և Մուսթափա  
փաշային սպայակցոյն ալ համալուծած է որ

եթէ իրենք յաղթուէին և թշնամոյն աւ-  
ջեւ ետ քաշուէին ստիպուէին, այս հա-  
ւատարմութեամբ օժանդակներն իրենց նահանգի  
դիմը կտրել պիտի աշխատէին, որպէս զի  
կողպուեն կամ Ռուսաց ձեռքը մասնեն  
գրամ ստանալով : Կրօնատէր իսլամները  
զանոնք քեֆէր կը կոչեն : Պէ Քիւրտուս-  
եայ են, ոչ Մահմետական, ոչ Ռուս, ոչ  
Թուրք, այլ ամենն ալ ամբարշտ աւա-  
ղակներ են : Կրօն, և իրաւունք ունին  
Երբ Քիւրդ օժանդակները Վան եկան,  
Կուսակալը պարտաւորեցաւ իւր ամուր  
ապարանքին մէջ փախուիլ և Վանէն Մու-  
սուր ըր քան աւուր ճանրայ հետեւ է,  
հետագիւր քաղաքները կանոնաւոր զօրք  
խնդրել, որպէս զի այդ վայրագ օժան-  
դակները զսպելու կարող ըլլայ :

Ռուսի նորէն կըսեմ թէ խաղաղու-  
թեան հաստատուելէն ետեւ, Օսմանեան  
կառավարութիւնը շատ դժուարութիւն  
պիտի քաշէ այդ ստահալ Քիւրդերը կար-  
գի բերելու, և կարող ու անողորմ կու-  
սակալի մը պէտք պիտի ունենայ երկրը  
խաղաղեցնելու համար : Հոս ամենքս ալ  
եւտանդեամբ այս բանին կը փափաքէինք,  
որովհետեւ առանց ասոր Պարսկաստանի  
հետ տեսուորն իսպառ պիտի ընչուի, և  
եթէ քիչ մը Ռուսը հոգ տանին, Պարսկա-  
ստանի բոլոր տուրեւտն իրենց հոգն ու  
նաւահանդիսները պիտի տանին : Այս  
կերպիւ Տրապիզոն ալ գրեթէ բոլորովին  
կը կորնչի : Դժբաղդաբար վերին իշխա-  
նութեան արամադրութիւններն այս կող-  
մերը դարձած չեն թուիր : Մուսթափա  
փաշան այս վիճակը շատ աղէկ հասկնա-  
լով ի զօր հրամայեց Պաշալիսի սպանու-  
թեանց հեղինակները մահուամբ պատժել,  
բայց իւր հրամանը չդրժադրեցաւ, և ա-  
նոնց զխաւորը՝ Եփէս ճէլալտարին գե-  
ողը և ազատ է : Այս միջոցին Պաշալիսի  
բնիկ Թուրք բնակիչները կատարեալ ռա-  
բիւն պատասխանատու բռնող յայտարա-  
րութիւններ կը տեսնուին, բայց այն խեղ-  
ճերը գրեթէ զբոլորովին չափ չարարե-  
ցան քիւրդերէն : Այսպէս է ահա այս երկ-  
րին մէջ արդարութեան գործադրութիւ-  
նը, և քիւրտ իսլամիկ փաշան չափազանց  
խնամք ունենալով իւր հայրենակցաց վը-  
րայ, չուզեր խառնութեամբ վարուիլ անոնց  
հետ : Ֆայիզ փաշան, որ չիրցաւ կոտորա-  
ծին առաջին տունը, և այս պատճառաւ  
պաշտօնանկ եղած էր Մուսթափա փաշայի  
հրամանաւ, տակաւին իւր հրամանատար-  
ութեան պաշտօնը կը շարունակէ, վասն զի  
Կարէն ու Կարիշէն շատ հետի է, և իւր  
զուրքը իսլամիկ փաշան պատշաճ չափեր  
Հայաստանի զօրաց ընդհանուր հրամանա-  
տարին հրամանը կատարել . . . :

Գաղով Քիւրդերուն, այլ և այլ տե-  
ղերէ իմաց կուտան ինձ թէ Չէլիքի, Տէ-  
լիպապայի և Քալիսիի պատերազմներն  
ետեւ Ռուսաց զիսկները հողին մէջն  
դուրս հաներ են կողպուելու համար, և  
այնպէս բազմ թուրք են . և երգէտեւ  
զիւղացիք կը փախան գանոնք թաղելու,  
ուստի այն զիսկները թուրք և վայրի  
զաղանաց ճարակ կըլլան :

Մուսթափա փաշայի բանակին մէջ մեծ  
խառնութիւն բանեցնելով յաղեցան Չէր-  
քէզներն ու Քիւրդերը սանձահարել : Ա-  
սիկայ խիստ դուրեկ արդիւնք մ'է, և  
գործին դժուարութեանը նայելով, մեծ  
պատիւ կը բերէ ընդհանուր հրամանա-  
տարին : Կրօն միւր, Մուսթափա փաշայի  
այս ընթացքն ոչ նուազ փառաւոր է քան  
զայն յաղթութիւնն որով Կարսի պաշա-  
րումը վերցնելու և ետ քաշուելու հար-  
կաղբեց Ռուսները :

### ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 24 սեպտ.  
Լրագիրք Պ. Թիւրի յայտարարութիւ-  
նը կը հրատարակեն, որ մանրամասն քնն-  
նալատութիւն մ'է Մար-Մահան մարա-  
ջախի քաղաքականութեան :  
Պ. Կրէվի վերջապէս ընդունեց Պ.  
Թիւրի յայտարարութիւնն իրեն գրուի հա-  
րապետական կուսակցութեան :  
Անուանի Պ. Լըվիսի աստղաբաշխը  
մեռաւ :

Վիլնիւ 23 սեպտ.  
Դիւանադատական ակումբներու մէջ  
Եւրոպիոյ միճակն ամեն վտանգէ ազա-  
տած կը նկատուի Ռուսաց անկարողու-  
թեան պատճառաւ, որոյ զօրութեան համ-  
բաւ մարած, աղէկեցութիւնը կարած

և ներքին դժուարութիւններն օր քան զօր  
աւելնալու վրայ են :

Բելճիւս 23 սեպտ.  
Այսօր նախարարաց խորհրդոյ նախա-  
գահ Պ. Թիւրա Արեւելեան խորհրդոյ վե-  
րաբերեալ ժողովի (սիլիկին) մը պաշտա-  
մաւորութիւն ընդունելով, ըսաւ թէ տըր-  
ւած աղերսագիրը նկատողութեան պի-  
տի տանու իրեն նշան Հաւաքարից քա-  
ղաքական հասանքին, և կ'աւելցնէ թէ պա-  
տասխանատու կառավարութեան պարտքն  
էր միապետութեան շահերը պահպանել :

Վիլնիւ 28 սեպտ.  
Այս պաշտօնական թերթերը կարծիք  
կը յայտնեն թէ ոչ մէկ տէրութիւն ար-  
գելք չպիտի ըլլայ Օսմանեան յաղթող  
զօրաց Դանուբի անցնելու և ապրտամը-  
կալ հարկատու իշխանները պատժելու :

Լոնտրա 28 սեպտ.  
Ռուսաց բանակին Անգլիոյ լրագրաց  
ստացած տեղեկութիւնները Բելճիւսի անձ-  
նատուութիւնն անհրաժեշտ կը դառնին .  
վասն զի Օսման փաշան, իւր զիւցապիս-  
կան քաջութեամբ հանդերձ պիտի հար-  
կաղբէր անձնատուր ըլլալ, պաշարն ու  
նաւազմութիւնը սպասած ըլլալուն պատ-  
ճառաւ . բայց Բելճիւս պաշար մտնելուն  
լարն այս տատակնիւղ աւուր մէջ դատա-  
հած գէպրեւորն ամենէն կարեւոր կը  
համարեն լրագիրք :

Պոմպայ 26 սեպտ.  
Փապալականութենէ եկած լուրերը կը  
ծանուցանեն թէ Սուլթանին արտաքոյ  
կարգի դեսպան Շիրվանիյաթէ Ահմետ  
Խուրսի էֆէնդիին սիրալիք ընդունելու  
թիւն գտեր է Աթլանտիկ Զիւրէն :

Վիլնիւ 27 սեպտ.  
Ներսիսիանայ ժողովին մէջ, Աւէրս-  
պէր իշխանն Արեւելեան անցիկ վրայ և  
զած հարցմանց պատասխանելով, Աւր-  
սիոյ կառավարութեան պարագայից  
յարմար քաղաքականութեան մը հետեւելը  
ժխտեց : Կառավարութիւնն, ըսաւ, լըր-  
ջարար քննելէ ետեւ իւր չէ գրեթէ ինքն  
յայտնեց . հետեւեալ միշտ այս նըպա-  
տակին դիմած է : Այս քաղաքականու-  
թիւնը փոխել տուող գէպը մը չարտա-  
հեցաւ : Ասիկցի զատ յայտնեց թէ իւր  
ընդունած չէ գրեթէ անկողնին հա-  
կաւակ էր Սերվիոյ վրայ որ և իցէ ճնշու-  
մը գործածել : Սալիկ ինդիքս որ Սեր-  
վիոյ պատերազմի մասնակցելու պատ-  
հանութեան մէջ կառավարութեան  
բանակը ընթացքն այժմէն յայտնելու  
չստիպեն դիմել :

Պ. Թիւրա ալ այն գաղափարներն յայտ-  
նեց Հաւաքարից երեսփոխանաց ժողովին  
մէջ :

Փարիզ 27 սեպտ.  
Խալիլ Եփէսի փաշան շարաթ օրը  
ճանրայ պիտի ելնէ Կ. Պոլիս երթալու  
համար :

Լոնտրա 27 սեպտ.  
Տէյլի Նիւս լրագրին Բելճիւսի Ռու-  
սական բանակին մէջ ունեցած թվովակ-  
ցին սեպտ. 28ի թուով մէկ հեռագիրը  
կը յայտնէ թէ Ռուսական բանակին մէջ  
գոյնաւորութիւնն ու մատուցութիւնը խիստ  
մեծցած է . և կ'աւելցնէ թէ պատերազ-  
մական գործողութեանց յաջողութիւնն  
անյուսակի կը նկատուի եթէ ներկայ հը-  
րամանատար ամբողջապէս չփոխուի :

Լոնտրա 27 սեպտ.  
Խալիսիոյ զօրքին Սուլթան անուն  
Անգլիական զորահաւորին հրամանատա-  
րութիւնէն հանուելուն լուրը ճիշդ չէ :

Օսլոյի շոգենաւն Խալիսիոյ զօրք-  
սուհին Մայիս պիտի տանի և Սուլթան  
զորահաւորն ալ պիտի ուղեկցի անոր, և  
յետոյ Անգլիական նաւատորմին հետ պի-  
տի միանայ :

Լոնտրա 28 սեպտ.  
Մորնինկ Բաթլ լրագիրը կը ծանուցա-  
նէ թէ Վարչապետի կառավարիչ Քոչալի  
զօրաւարը Նիքոս Մեծ դուրսին տեղ  
Դանուբեան բանակին հրամանատար պի-  
տի կարգուի :

Լոնտրա 28 սեպտ.

|            |             |
|------------|-------------|
| Օսմ. Բան.  | 40 5/16     |
| Փոլս.      | 4863 40 3/4 |
| •          | 1869 40 3/8 |
| •          | 1871 38 3/4 |
| •          | 1872 48     |
| •          | 1873 40 1/4 |
| •          | 1874 58 5/8 |
| Անգլ. Բան. | 95 41/16    |

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վաղը լրագիրը կը ծանուցանէ  
թէ Պալիսիոյ պատմաբանութեան  
վերաբերեալ քանի մը կարեւոր գրու-  
թիւնը կ'այսբարկան կառավարութեան  
ձեռքն ինկիւր են, և թէ յիշեալ գրու-  
թիւններէն կը հասկցուի եղբր թէ Պ.  
Կրաւաթովսն Պալիսիոյ պատմաբ-  
անութեան մէջ մտաւ ունեցիւր է :

Հինգ շարժի օրն յիսունի չափ  
Պալիսիոյ Պալիսիոյ շոգենաւով  
Արեւիյի բերդը զրկուեցան ի բան-  
տարկութիւն :

### ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Է Օ Ն Ս Մ Ը Ո Ի Մ Ո Ւ Մ Ի Է

|                        |       |
|------------------------|-------|
| 16 սեպտ. ուրաթ իրիկուն | 40,30 |
| 17 սեպտ. շարաթ առաւօտ  |       |
| •                      | 40,35 |
| •                      | 40,36 |

Բուսիլի երկաթուղի 32 75  
Թղթաղում 184 4/2

### ԲՆԹԱՅՔ ԱՐՃԱԹՂՈՑ

Կ. Պոլիս 16 Սեպտեմբեր

|                                  |            |
|----------------------------------|------------|
| Սուրիթ Ժէ իշխանի բաժն. Անգլ. լր. | 3,40       |
| •                                | 2, 3       |
| Կ. Պոլիս Պաշալիս                 | 3, 9       |
| Քրիսթ Ժէ իշխան                   | 3,40       |
| Քրիսթ Օսթրո-Փոլս                 | —          |
| Փոլս.                            | 1863 52    |
| •                                | 1865 53    |
| •                                | 1869 49    |
| •                                | 1872 47 75 |
| •                                | 1873 48    |

### ԲՆԹԱՅՔ ԳՐԱՄՈՑ

16 Սեպտեմբեր

|              |       |
|--------------|-------|
| Անգլ. լր.    | 409   |
| Նաւթի տիկ    | 86 20 |
| Խիւսիսի Ռուս | 8     |
| Գրքից        | 54 5  |
| Հինգ ֆրանք   | —     |
| Հինգ նոյ     | 417   |
| Պրիւն        | 462   |

## ԱԶԳԱՅԻՆ

Ազգային ժողովն երէկ դուռնաբե-  
ցաւ Մայր եկեղեցին ընդ նախագա-  
հութեամբ Ամեն Ս. Պատրիարք հօր  
և առեւտարութեամբ Վսեմ. Յ.  
Նուրեան էֆէնդիին :

Առեւտար գործողութիւնները  
կատարուելէ ետեւ, Քաղ. ժողովոյ մէկ  
գիրը կարգադրեցաւ, որով կը ծա-  
նուցանէր թէ արդէն հրաժարեալ  
իւր երեք անգամակիցներէն զատ,  
Փէշվաթեան, Մէրեթեան և  
Գարակէօզեան էֆէնդիներն ալ հրա-  
ժարած են : Դիւրապէս ասոնց ալ հրա-  
ժարական ընդունելով որպէս Յ նոր  
անձինք ընտրել :

Ուրիշ քանի մը գիրքեր ալ կար-  
գացուել և պէտք եղած տեղերն  
յղուելէ ետեւ՝ օրակարգին անցնելով  
դատական մասնաժողովոյ ընտրու-  
թեան տաթիւ առեւտար էֆէն-  
դիին յայտարարեց թէ ըստ կանո-  
նադրութեան, Փալիսիոյ Սուրիսի  
էֆէնդիին տարապաշտօնի ձեռք-  
հաստ զիսկներէն նախաքննու-  
թեանը յղած էր . բայց տեղեկա-  
գիրն եկած չէր, որպէս զի ընտրուե-  
լիք դատական մասնաժողովն իւր  
կատարելիք քննութեան հիմաւո-  
նենայ :

Սուր վրայ փափաղեան Սաւիան  
և Ղազարսեան Քրիստոստուր էֆէն-  
դիները սարսափելի աղաղակ մը բառ-  
նալով թշնամեց տեղալ սկանաւ  
տեսնապետին վրայ, իւր թէ դատա-  
կան մասնաժողովոյ ընտրութիւնն յե-  
տաձգելու դիմում ունեցած ըլլաւ,  
հետեւեալ խորհրդարանական ա-  
մեն օրինաց և կանոնաց հակառակ,  
անկարգութիւնն ու յանդուրժութիւ-  
նը մինչեւ իսկ առեւտարութեան գիւ-  
նէն վար առնելու աստիճան հասու-  
ցին իրենց քանի մ'արբանեկաց հետ

Դիւրապէս իւր մեծամասնութեան  
քուէով ընտրած դիւանին գէմ ի  
գործ դրուած այսպիսի անօրինակ  
յարձակման, ճնշման և թշնամոյն  
չհանդուրժելով, անմիջապէս տե-  
նապետ իւր աթոռը վերադարձնե-  
լով՝ ստուար մեծամասնութեամբ լըր-  
տահութեան քուէ տուաւ, և ան-  
կարգութեան գիւնաւոր հեղինակներն  
ալ արտաքաման քուէով դատապար-  
տեց, գործադրութիւնը Ս. Նախա-  
գահին յանձնելով :

Սակայն աղմկայողք իրենց գո-  
ւում գոչումը կը շարունակէին, և  
խօսք հասկցնել անկարելի էր այն

ժխտելն մէջ: Նախագահը նոյն միջո-  
ցին դռնմուտի տառապանքներն ը-  
րաւ, զոր ժողովն ընդունեց, և ժո-  
ղովրդեան գուրտ երևեցն յետոյ ծա-  
նոր յանդիմանութիւններ ընկողման-  
կարգութեան պատճառ եղողներն  
ի բարեկարգութիւն և ի կանոնա-  
պահութիւն յորդորեց, և այսպէս  
հաղիւ ժխտն հանդարտեցաւ:

Սոյն միջոցին պատրիարքական  
փոխանորդ Տ. Յ. Մկրտչան ստիպու-  
եց ինքնապէս ազգայն ժողովին որ քննիչ  
մասնաժողովն անյայտ ընտրուի,  
որպէս զի իւր վրայ դրուած ամբաս-  
տանութիւնները քննուելով ժամ-  
մ'առաջ արգարութիւնն երևան ել-  
նէ:

Ժողովը նկատողութեան առնելով  
որպէս զատական մասնաժողով ընտ-  
րութիւնն անմիջապէս կատարել Ս-  
տեղանոց եփէնտիին առաջարկած  
հետեւեալ ձևին վրայ. այսինքն Պատ-  
րիարքական փոխանորդին պաշտո-  
նաւարտութեան վերաբերեալ որ և է  
ամբաստանութիւնը յիշեալ մասնա-  
ժողովը ներկայացուին, ու նա ալ  
ազգային իրաւասութեան սահմանին  
մէջ օրինաւորապէս քննելով արդիւն-  
քնն ազգային ժողովը տեղեկագրէ:

Սոյն հիման վրայ ժողովը դիւա-  
նին ներկայացուցած ցանկն ամբող-  
ջապէս ընդունելով հետեւեալ առ-  
ձինքն ընտրեց.

- Արթ. Գարեգին վարդ. Թովմարեան  
» Ներսէս » Արսենեան  
Վսեմ: Սահակ Եփէնտի Սպար  
Մեծ. Սեդեքերիմ Մանուկեան  
» Մկրտիչ » Քիւրքճիխանեան  
» Արիկ » Սեդեան  
» Ստեփան » Պէյրիկեան:

Ժողովն յետոյ Պիս Եկի խնդիրը  
ձեռք առնելով, կարծ վիճաբանու-  
թեան մ'ետեւ որպէս զալ ուրաթ  
օրը վերստին գումարուի և այս մա-  
սին պէտք եղած վերջնական որոշու-  
մալ:

ՊԵՇՏՈՆԱԿԱՆ ԵՄԵՆՈՒՅՈՒՄ

Ազգ. վարչութեան նորընտիր  
Քաղ. ժողովն իւր պաշտօնավարու-  
թեան ձեռնարկելու միջոցին իւր  
գէշն եղած բազմաթիւ զրադանաց  
մէջ փոյթ ունեցաւ նաեւ Ս. Քրիստեան  
Ազգ. Հիւանդանոցին յատուկ այցե-  
լութիւն մը տալ, և ժողովականաց  
ամանց անձնական ներկայութեամբ  
անոր վիճակը մանրամասնաբար քնն-  
նելով՝ գոհացուցիչ գտաւ և արժան  
համարեց իւր գոհունակութիւնը հը-  
րատարակել պաշտօնապէս առ ի  
ցրուէն այն տրուելիքներուն՝ որ մաս-  
նաւորաց կողմանէ այս վերջին օրերս  
Հիւանդանոցին նկատմամբ տեղի ու-  
նեցած էին և մինչև Ազգ. վարչու-  
թեան ատեանն արձագանգ դատմ:  
16 սեպտ. 1877  
ի Պատրիարքարանի Հայոց  
Կ. Պոլիս

ՊԵՇՏՈՆԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ

ԵՆ ՆՈՐ ԳՈՐ

Լրագրոյ վերջնութիւն թուով  
Պատրիարքական փոխանորդութեան  
պաշտօնը՝ որ Սահմանադրութեան  
հիմք յորդածին տրամադրութեամբ  
Դատաստանական խորհրդոյ նախա-  
գահութեան լծողեալ է, վերստին  
ամուրի եկեղեցականաց յանձնելու  
առաջարկութեան դէմ գրելով, ցոյց  
տուած էինք թէ այն առաջարկին  
գործարարութիւնն, և որ առկա ճիշ-  
դըն է, նախընտրելի զեղծման վերա-  
դառնալը՝ թէ՛ մեր եկեղեցական կա-  
նոնաց և թէ՛ Սահմանադրութեան  
ոգելոյն հակառակ է:

Նոր Գար, որ յիշեալ առաջար-  
կին պաշտպանն ու փաստաբանն է,  
իւր հինգշաբթի առաւ 21/8 թուով  
իւր թէ մեր գրածները հերքել ճշդ-  
նելով, կրտէ. «Պատրիարքական փա-  
ստանորդութեան քահանայի յանձ-  
նաւ ելին, յառաջ եկած զեղծմանն  
« յիշելով՝ առաջարկած էին օմանք  
« այդ պաշտօնն ամուրի եկեղեցա-  
« կանաց յանձնել ըստ առաջնոյն,  
« մենք ալ այդ առաջարկութիւնն  
« յիշեալ զեղծմանց իրեւ դարման՝  
« ընդունելի գտած էինք: »

Սոյն նախադասութեան եթէ հե-  
տեւութիւն մը կրնայ յառաջ գալ,  
սա է թէ ըստ Նոր Գարին՝ զեղծմանց  
առաջին առնելու համար՝ ժամանա-  
կաւ դարձած զեղծում մ'իւր օ-  
րէնք ընդունելու է:

Այսպիսի անհեթեմ առարկու-  
թիւն մ'ապացոյց է թէ Նոր Գար ազ-  
գին բարեկարգութեանը նկատմամբ  
խորհուրդ տալու տրամադրութիւն  
չունի. մասն զի պաշտօնէի մը փո-  
փոխութիւնը զեղծմանց առաջին առ-  
նելու դարմանն չէ երբեք:

Եթէ ստուգել զեղծում տեղի կու-  
նենայ փոխանորդարանի մէջ, հարկ  
է նախ ատար բուն պատճառն ի վեր  
հանել:

Երբ օրէնք կեցած տեղն իսկ  
երբեմն զեղծում տեղի կունենայ,  
օրէնք չկեցած տեղը կարելի է եր-  
բէք որ զեղծում տեղի չունենայ:

Ուստի խնդիրը դուրսէն և ոչ  
անձի վրայ է:

Նոր Գար եթէ բարեկարգութեան  
խնդիրը ձեռք առնուր, պիտի հա-  
մաձայնէր իրեն, և սոյն վիճաբա-  
նութեան հարկ չպիտի մնար երբեք:

Բայց օրովհետեւ Նոր Գար անձի  
վրայ խնդիրէր յարուցանէ, բնակա-  
նաբար իրաւունք կունենանք կառ-  
կածելու թէ դիմումն և նպատակի  
կը ծառայէ:

Յիշեալ տրամաբան խմբագիրն այն-  
պէս կը կարծէ որ եթէ Պատրիարքա-  
կան փոխանորդութեան պաշտօնն ա-  
մուրի եկեղեցականի յանձնուի, զեղ-  
ծումները պիտի դադրին, և ասկէ  
կը հետեւին թէ ըստ օրում քահա-  
նայ փոխանորդը ձիառակը ըլլալով  
գտաւորայն հետ յարաբերութիւն կա-  
նենայ, պէտք չէ որ փոխանորդու-  
թեան պաշտօն վարէ: «Գաղտնա-  
նախան ընդհանուր կանոն է, կրտէ,  
« որ գաղտնաւոր մը երբեք գաղտնայն  
« հետ յարաբերութեան մէջ չըլլայու-  
« ք. արդէն հաստատուելու գաղտնա-  
« ւոր՝ երբ իր ազգականներէն միոյն  
« գաղտնաւոր ներկայանայ իւր ժողովին,  
« այդ գաղտնի մէջ գաղտնաւորութեան  
« կը դադրի. երբ իմացուի թէ՛ գա-  
« ղտնաւորը, թէ և ազգականը չէ գա-  
« ղտնայն, բայց ուրիշ յարաբերու-  
« թիւններով կապուած է և յայտնի  
« կամ գաղտնի յարաբերութեան մէջ  
« է՝ իսկոյն օրէնք է որ գաղտնաւորու-  
« թեան գաղտնի: »

Գաղտնաւորական ընդհանուր կա-  
նոն մ'է այդ, որուն ոչ ոք կրնայ հա-  
կառակիլ:

Սակայն չենք գիտեր թէ Նոր  
Գար ինչ տեսութեամբ այդ տրա-  
մադրութիւնը մէջ կը բերէ:

Եթէ քահանայ փոխանորդի մը ժո-  
ղովրդեան հետ յարաբերութեան մէջ  
գաղտնաւորութեան համար՝ աշտու-  
թեան կառկած հաւանականութիւն կու-  
ցայ տար, ասկէ ալ սա կը հետեւի թէ  
գաղտնաւորութեան պաշտօնը հրեշտա-  
կաց յանձնելու է. օրովհետեւ չկայ  
մէկն որ մարդոց հետ յարաբերու-  
թիւն չունենայ, կուզէ աշխարհական  
լինի, կուզէ ամուրի և կամ ամուս-  
նացեալ:

Մեր տրամաբան խմբագիրը թող  
ներէ իրեն ըսելու թէ իր մէջ բերած

օրինական տրամադրութեան ողին չէ  
կրցած ըմբռնել:

Յիշեալ տրամադրութեան բուն  
նպատակն հաւանական թուած զեղծ-  
մանց առաջին առնելու կը ծառայէ,  
և գաղտնայն իրաւունք կուտայ ու-  
րջութեամբ երբ տեսնէ թէ գաղտնաւորն  
իւր օտարին հետ որ և է յարաբերու-  
թիւն մ'ունի:

Աւստի օրինաց այդ տրամադ-  
րութեան իւր պաշտպանել ճշդած  
գաղտնի փաստ չկրնար ըլլալ երբեք.  
որովհետեւ գաղտնաւորութեան պաշ-  
տօնն ամուրի եկեղեցականի յանձ-  
նելու իրաւանց նշանակեց մ'անդամ  
չհետեւիր ասկէ:

Եթէ մեր տրամաբան խմբագիրն  
այնպէս կը կարծէ որ կուտակուած ե-  
կեղեցականք՝ ըստ օրում ամուրի  
ժողովրդոց հետ յարաբերութիւն  
չունին կամ չեն կրնար ունենալ, և  
ասկէ հետեւինք թէ որ Պատրիար-  
քական փոխանորդութեան ամուրի  
եկեղեցականաց յանձնելու առաջար-  
կութիւն կը ներկայէ, իւր այդ ըմ-  
բռնմանը վրայ կը կարէ կցինք. վա-  
ստն զի աշխարհ կը տեսնէ այսօր որ  
մեր ամուրի եկեղեցականները գուցէ  
քահանաներէ աւելի ժողովրդոց հետ  
յարաբերութիւն ունին և ընտանեաց  
մէջ արձակ համարձակ մտաւ կը բա-  
նեն, որ ըստ եկեղեցական օրինաց  
խտուր արգելաւ է:

Հետեւաբար Նոր Գարին իբրեւ դա-  
ման խորհած միջոցն ո' և է տարե-  
րութիւն մ'աշխարհագրելու հայ-  
րապետագիր կանոնաց դէմ արգէն  
կեցած զեղծումը քաջալերելու կը  
ծառայէ պարզապէս, որ իւր օրէնք  
բնականաբար մեր մտաց մէջ իրա-  
ւացի կատարել կը դարձնուի, և  
հարկաւ նպատակի մը համար է որ  
նախընտրելի զեղծումն վերադառնա-  
նալու առաջարկութիւնն այնչափ վեր-  
մութեամբ կը պաշտպանուի:

Մեք այդ դիմումն ու նպատա-  
կը մեր վերջնութիւն թուով ի վեր  
հանելովք, ըսելով թէ՛ «Պատրիար-  
քական փոխանորդութեան կա-  
րեւոր պաշտօնն ամուրի եկեղեցակա-  
նաց յանձնելու առաջարկն ուրիշ  
հետեւութեան մ'ալ կը յանգի, այն է  
քահանայից գաղտնի վիճակն ուրա-  
կարելի է նուազագոյն, և քահա-  
նաներն ի նուազագոյն թեան պահելով  
ի հարկին կամակատար կրցը գործի-  
ներ գործեն: »

Ամուրի փաստաւոր եկեղեցակա-  
նաց փախաւքն է այս, օտարաւոր գը-  
րութեան մը հետեւութիւն, որ մեր  
ազգին ի պաշտպանութիւն առաջնոր-  
դելու կը ներկայի:

Մեր եկեղեցին իր կանոններն ու  
օրենսդրութիւնն ունի, և ատանց-  
մով է որ այսօր աշխարհաւն իւր  
հին անկախ և ինքնօրէն եկեղեցի կը  
պանծայ իրաւամբ, և օտարաց նա-  
խանքը կը հրաւիրէ:

Ինչ պատճառ ունինք մեր եկե-  
ղեցական եկեղեցիները վեր ի վայր  
չընելու, և մեր Հայեկական նախա-  
պէն հետեւալու, մինչդեռ իւրաքանչիւ  
մէջ «Հին կամօղիկ» կոչուած կուսակ-  
ցութիւն մը՝ եկեղեցւոյ բուն նախա-  
նորդին կուզէ դառնալ, առանց եր-  
բէք բանի տեղ դնելու վատիկանի  
արձակած շանթին, որոց բարեբաղ-  
դարար ժամանակն անցած է:

Մեր եկեղեցական կանոնը խը-  
տիւ կ'արգիլէ ամուրի եկեղեցակա-  
նաց քաղաքներու և ընտանեաց մէջ  
բնակիլը:

Սոյն կանոնին տրամադրութեամբ  
էր որ գաղտնաւոր առաջնորդ եղիւ-  
կողմաները սոփորաբար վանքերու  
մէջ կը նստէին և քաղաքացի մէջ ա-  
թաւակալ քահանայներն իրենց փո-  
խանորդ կամ տեղապահ կունենային:

Սոյն կանոնին տրամադրութեամբ  
է նաեւ որ քաղաքի մէջ գաղտնա-  
ւորութեան հետեւալու մը երբոր աշ-  
խարհական մը տունն երթալու պէտք  
ունենայ, առաջերէնցին առաջնոր-  
դութեամբ պիտի երթայ. ընտան-  
եաց երես չպիտի տեսնէ, և առանց  
գիշեր անցալու՝ կրկին իւր առաջնոր-  
դարանը պիտի գառնայ, և եթէ  
ամուրի եկեղեցական մը՝ եկեղեցւոյ  
սոյն պատուէրին հակառակ վարուի,  
վերջին թողալի հաղիւ կրնայ արժա-  
նանալ: Արդ ուր կը մնայ գաղտնա-  
ւորութեան խորհրդոյ նախադասու-  
թեան պաշտօն վարել, նորաւոր կա-  
նոնը երբեք տեսնել, անոնց հետ խո-  
սիլ, ամուսնական խնդրոց մէջ մշտ-  
նել, և ընտանեաց հետ յարաբերու-  
թիւն ունենալ:

Ասկէ մինչև 60-70 տարի առաջ մայ-  
րաքաղաքիս մէջ մնայուն քաղաքու-  
թեան պաշտօն չկար, այլ մեծ պա-  
հոց օրերը Պատրիարքին հրաւիր-  
մամբ վանքերէն քանի մը վարդա-  
պետ կուգային եկեղեցեաց մէջ քա-  
րոջ կը խօսէին, և գաղտնի յետոյ  
իրենց վանքը կը վերադառնային.  
Իսկ ուրիշ ատեններ, պէտք եղած  
ժամանակ առաջերէնցը քարոջ կը  
խօսէր. վասն զի այսպէս կը տրա-  
մադրէ եկեղեցւոյ կանոնը:

Մեր եկեղեցւոյ կանոնաց հակա-  
ռակող տրամաբան խմբագիրն, որ  
խելքը չհասած խնդիրներու մէջ ալ  
կը մտնէ յանդգնաբար, տեսնէ ինչ  
կրտէ. «Սակայն անցած են այն օ-  
րերն և այն օրինաց օրերն. ուստի  
«կարծ խօսելով կրնանք կարծել հա-  
«կըցուցած ըլլալ Մարիսի թէ՛ աղէկ  
«չըլլալ այնքան ետ երթալ և այն օ-  
րերուն յարմարեցնել ինքզինքնաւ: »

Ինչ գեղեցիկ դատում, և ինչ  
սքանչելի փաստաբանութիւն:

Մեր տրամաբան խմբագիրն այն-  
չափ տգէտ է եկեղեցական կարգաց,  
կանոնաց և օրենսդրութեանց, որ կը  
կարծէ թէ իւր և կամօրանց պահանջ-  
մամբ եկեղեցական կանոն մը կրնայ  
ջնջուիլ կամ փոխադրուի:

Եւ արդարեւ ցուալի է տեսնել որ  
իւր լեզուն, պատմութիւնն և եկեղեց-  
ւոյն օրէնքն ու կանոնները չգիտա-  
ցող մէկն յանդգնաբար այսպիսի փա-  
փուկ խնդրոց մէջ կը մտնէ, և հը-  
րապարակը գայթակղութեամբ կը  
լնու:

Այս ալ մեր ազգին դժբաղդու-  
թեանն է:

Ի վերջոյ՝ արժան կը համարինք  
սա ևս յայտարարել թէ մեր այս  
յոգութեանն ոչ Տ. Յ. Մկրտչանի  
պաշտպանութեան համար կը բերենք,  
և ոչ ընդդէմ անոր ոտնայ:

Ամբաստանութիւնը դատ խնդիր  
մ'է, որ եթէ հաստատուի, Տ. Յ.  
Մկրտչան անշուշտ կը գաղտնաւորուի  
ըստ օրինի. իսկ եթէ չկրնայ հա-  
տատուիլ, ամբաստանողը պարզա-  
պէս զրպարտիչ պիտի նկատուի, և  
իբրեւ այն պէտք եղած դատաւարա-  
տութիւնը կը մէջ. ժողովէն:

Աստիք քննութիւնն ու գաղտնա-  
ւորութիւնն կրնան ի վեր հանել, և  
մեք չենք ուզեր այժմէն կանխախ-  
ղաւոր մտքներ ընել, ուրախալ համադ-  
ուած ըլլանք թէ Տ. Յ. Մկրտչանի պէս  
եկեղեցական մ'իւր պատուոյն արատ  
բերող վարմանց մէջ չգտնուիր:

Ուստի սպասելով կատարուելիք  
քննութեան՝ կը յորդորենք Նոր Գա-  
րի խմբագիրն որ արդարութեան օ-  
րէնքը յարգելով, քննութեան և  
գաղտնաւորութեան երթարկեալ խնդրոց  
մը վրայ կանխադատելու և հրապա-  
րակը գայթակղութեամբ լցնելու  
ապօրինութեան դադրի և քննու-  
թեան արդեանցին սպասէ մեզ հետ:

Եղեկաթի եանդ համար պէտք է գիտել Մի.  
աթիոյ Բերլինացի բազարի մօտ Ալալանի  
Կիպորս սործակաւար